

անճամատուութեան:

Պէտք է Օհաննէսը փախանայ ըլլայ:

Աղջիկը ծռած էր պառաւիւն վրայ, պրկուած ու հրամայող: Նայուածքը կը կտրէր թելը երկար պայքարին: Փոթորիկէն վերջը տարածուող խաղաղութիւնը նոր գրաւութիւններ դրաւ իր դէմքին ու շարժումներուն մէջը: Բուրումը, յետոյ կարմիր, հագիւ նշմարուող փաթաթը, կանչեցին տղան իրականին:

Պառաւիւն ընկնուած գլուխը մեղմ օրօրով ու դողացող իր շրթները դիտմամբ գաղտասուէէն քարճրացան հրնուանքի

տարագին:

Երբ Օհաննէսը դառնայ բանակէն՝ փախանայ պիտի ըլլայ:

Ու ատելութենէն նոր պարպուած աչքերը կը շարունակէին յամենալ ծռած մօնթին վրայ: Ան ըրաւ վերջին խոնարհութիւնն ալ ու, երբ ջորին կ'ընէր դարձուածքը, մատնին շրթներուն, առաւ դաշինքը կնքող համբոյրը: Յետոյ հրահանգները ստացած զինուորի մը պէս ուղղուեցաւ դէպի փողով:

Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԵՐԳԻԾԱԿԱՆԸ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆԻ

«ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՋՈՒՆԻ» ՎԷՊՈՒՄ

Գ.

Փանջունին ինչպէս նկատելի են նախորդները, փաղափկան դէմագոգի, դոգմատիկ ընկերվարականի, գրքերից, օտարածին խոնամփնթոր տեսութիւններից կեանք մտնող, միջավայր ու ժամանակ չը անաչող կուսակցականի, սուտ յեղափոխականի ամէնից յաջողուած կերպարն է հայ գրականութեան մէջ: Նա ուղղակի շարունակութիւնն է, որոշ իմաստով "կատարելագործեալ" տիպն է այն յեղափոխութեան մակարոյթների, որոնց կերպարները այնքան հարտարօրէն կերտել էր Օտեանը համանուն պատմութեան ծաշար-վիպակում եւ "Պրոպագանդիստը" անուարտ վէպում: Այս կերպարը ստեղծելիս Օտեանը գործադրել է իր երգիծաբանական հանճարի լաւագոյն կողմերը, կերպարաստեղծման ռեալիստական միջոցներով երկնել անկրկնելիօրէն ինքնատիպ, տպաւորիչ եւ ամուռաց կերպար, ինչպէս Տարտաքենը, Հարպագոնը, Դոն Բիշոտը, Բաջարի Շվէյլը եւ Բաջ Նազարը: Տիպականութեան դասական

օրինակ է այն՝ անհատական-կոնկրետի եւ խտացուած ընդհանուրի զարմանալի միասնութեամբ: Խորապէս նշմարտացի, կենսականօրէն հաւաստի այդ կերպարը կերտուած է երգիծանքի տարբեր միջոցներով ու հնարանգներով:

Կերպարի ամբողջականութիւնն ապահովող նախադրեալներից մէկն այն է, որ Օտեանը Փանջունու կենսագրութիւնը ներկայացնում է ծննդեան օրից սկսեալ, նրա բնաւորութիւնը, գործունէութեան աղետաւոր հետեւանքները, հասարակական-փաղափկան իմաստով վտանգաւորութիւնը ցուցարում է նրա անին ու հասակին զուգընթաց: Ճիշտ է, մի՛ առիթով միայն Օտեանը Փանջունուն անուանում է "համակրելի հերոս", սակայն այդ էլ ուղղակի իմաստով ընդունելը կը յանգեցնի թիրիմացութիւնների: Հերոսի նկատմամբ հեղինակի հեգնական վերաբերմունքը երեւում է դեռ նրա անուանակոչութիւնից: Ինչպէս Օտեանի միւս հերոսների խօսուն անունները՝ Կուլտամեանց, Ինճէլտուրեանց,

Առկերունի, Թոչնակերեան, Սուսերեան, Շիտակեան եւայլն, Փանջունին նոյնպէս երգիծական մականուն է եւ արեւելահայ ընթերցմամբ պիտի հնչի քան չունի: Հերոսի աւերիչ, կործանիչ բնաւորութիւնը ձեւաւորում է դեռ վաղ մանկութիւնից, անգամ ծննդեան օրից: "Մայրը տղաքերֆի հետեւանով մեռած է", ահա առաջին քննադատումը, այսինքն՝ նա ծնուել է կործանելով: Եւ որքան էլ Օտեանը ջանում է անկողմնակալ երեւալ, իր հեղինակային վերաբերմունքը անմիջապէս չղրսւորել, միեւնոյն է, դա նկատուում է եւ ընթերցում որպէս երգիծական հնարանք:

Մօր մահից յետոյ փոքրիկ Փանջունուն կերակրում են այծի կաթով: Թուում է՝ արտառոց ոչինչ չկայ, մանաւանդ որ իր քաղաքութեամբ այծի կաթն է ամէնից մօտ մայրական կաթին: Բայց այս չնչին թուացող փաստն էլ Օտեանը դարձնում է հերոսի էութիւնը բնութագրող միջոց, իբր "կողմնակիօրէն" ասուած խօսք՝ իրեն վերապահելով փաստը օրյեկտիւօրէն արձանագրողի դերը. "Ուրիշ կենսագիր մը գուցէ հետեւութիւններ անել փորձէր այս աննշան դիպուածէն՝ ընկեր Փանջունիի ունայնամտութիւնն ու թեթեւութիւնը վերագրելով իր առած այդ նախնական սնունդին: Ես, ինչպէս ըսի, չեմ ուզեր ոեւէ դատաստան ընել, այլ կը բաւականանամ իրողութիւններ արձանագրելով" (20, ընդգծ. իմն են - Ս. Մ.):

Այս պարզ, անմեղ թուացող եւ ձեւակերպման մէջ արդէն առկայ են հեղինակային վերաբերմունքի երկու արտայայտութիւն, Փանջունու համար էական ու բնութագրական երկու յատկանիշ՝ ունայնամտութիւն եւ թեթեւամտութիւն:

"Կենսագրական մօթեր" մասում Օտեանն աստիճանաբար, գրեթէ աննկատ, կուտակում է իր հերոսի բնութագրական յատկանիշները, որոնք սկզբում թուում են

բնական, երեխայական անմեղ չարահնիութիւններ: Դրանք, սակայն հերոսի անի հետ միասին դառնում են բնաւորութեան գիծ, ամրակայուն որպէս սկզբունք, վարքագիծ ու գործելակերպ:

Հերոսն ուշ է սկսում խօսել, քայքայեալ բացուելուց յետոյ այլեւս չի փակուում: Եւ որքան մեծանում՝ այնքան ուժգնանում է խօսելու կատաղութիւնը: Շրջապատն անդադար խօսող այդ փորձանքից ուրիշ փրկութիւն չունի, բացի "ականջները բամպակ թխելուց": Բժիշկը ուշադիր զննելով՝ եզրակացնում է. "Ճար ու դարման չկայ, այս տղան միշտ պիտի խօսի" (21):

Այսինքն՝ Փանջունին ինքն անբուժելի, անուղղելի է, հասարակութիւնն ինքը պիտի մտածի նրանից փրկուելու մասին:

Փանջունու ապագայ գործելակերպի գրեթէ բոլոր նախանշանները կարելի է տեսնել նրա մանկական արարքներում:

Հայրը ոչ մի կերպ չի կարողանում նրան հասկացնել ամենատարրական բաներ, չի յաջողում նոյնիսկ նրա գլուխը մտցնել շինել եւ կտրել բառերի իմաստները: Իսկ Փանջունին տան արժէքաւոր իրերն ու անօթները յատակին գարկելով ջարդում-փշրում էր՝ ասելով. "Շինցի՛, հայրի՛կ": Այսպիսին է նրա յետագայ ողջ գործունէութիւնը, որի արդիւնքը ֆանդում-աւերումն է՝ ո՛ր բնագաւառն ու միջավայրն էլ մոտիկ գործի նա՛ կենտրոնի յանձնարարութեամբ թէ սեփական նախաձեռնութեամբ:

Դպրոցում էլ նոյն յամառ անհասկցողն է ու անգիշում քթամիտը: Ընկերոջ հետ վիճում է 5x5ի շուրջ եւ, որպէս զի համոզի նրան, թէ արտադրեալը 50 կը լինի եւ ոչ՝ 25, ֆարով ջարդում է նրա գլուխը՝ իբրեւ համոզելու անառակելի եղանակ: Ինքն անկարող է գիտելիքներ ըմբռնել ու իւրացնել, քայքայարտադրում է, որ ուրիշներն անվերապահ ընդունեն

իր վճիռները: Անընդհատ խօսելու կատաղութեան հետ միասին ունի նաեւ անպատճառ համոզելու մարմաջ: Զեւաւորում է մեծամիտ, ինքնահաւան, կամակոր, ուրիշներին անհամդուրժող բնավորութիւնը, որը հաշի չի առնելու ո՛չ միջավայր, ո՛չ համակեցութեան նորմեր, ո՛չ բարոյական սկզբունքներ: Որդու այս յատկութիւնները ճանաչող հայրը լաւատեսութեւն սխալում էր՝ կարծելով, թէ տղան ընդամենը . . . փորձամի պիտի դառնար: Սակայն սպառնալից է հնչում հեղինակի կանխատեսումը. "Փանջունին փորձամի պիտի չըլլար, այլ՝ յեղափոխական գործիչ" (22):

Մեծ գրողները հենց նրանով են մեծ, որ իրականութեան խոր ճանաչողութեան, արդիականութեան սուր զգացողութեան հետ միասին ունենում են ճանաչածը, զգացածը գեղարուեստօրէն վերարտադրելու բարձրագոյն կարողութիւն: Այս իմաստով Նրումանդ Օտեանը բացառիկ է: Իր ապրած դարաշրջանի հայ հանրային ու կուսակցական կեանքը նա ուսումնասիրել էր ամենայն բծախնդրութեամբ՝ վեր կանգնած լինելով որեւէ կողմնակալութիւնից ու կուսակցութիւնից: Նա միշտ եղել է եռացող կեանքի կենտրոնում, մօտիկից շփուել է բոլոր երեւելիների հետ, լաւ է իմացել նրանց էութիւնը: Կարծես նախախնամութիւնն էր նրան ուղարկել յեղափոխական իրադարձութիւնների յորձանուտը, որ իր ամենատես հայեացքով ընդգրկի ամբողջը, խարազանի ու մերկացնի կուսակցականների արատներն ու կեղծ յեղափոխականների շահատակութիւնները: Նա յստակօրէն տարբերակում էր ազգային յեղափոխութիւնը՝ ուղղուած թուրքական բռնատիրութեան դէմ, եւ ընկերավարական-սոցիալիստական յեղափոխութիւնը, խորապէս ըմբռնում էր նրանց օգուտների ու վնասների հաշուելիչը, քաջամարտ

էր յեղափոխական մակարոյթներին: Ապացոյց՝ նրա կերտած անմահ կերպարները: Գիտէր, որ ամբողջ ժողովուրդը ընկերավարական-յեղափոխական չէ, որ յեղափոխական են միայն խմբաւորումներն ու կուսակցութիւնները, որոնք քաղաքական կեանքի ասպարէզ են մտել ժողովրդի բարօրութեան համար մարտնչելու խոստումներով ու երդումներով, բայց ունեն հեռայար այլ նպատակներ: Ի դէպ, նոյնպիսի սքափ մտածողութիւն ունէր նրա մեծ ժամանակակից Յովհ. Թումանեանը: Ցարական պաշտօնեաների՝ ազգամիջեան ընդհարումներ հրահրելու, հայ ժողովրդին վարկաբեկելու եւ իրենց սաղարմքներն արդարացնելու փորձերին նա պատասխանում էր ազնիւ զայրոյթով: Հայատեացութեամբ իրար հետ մրցող ոռուսական պաշտօնեաները դարասկզբին կայսերապետութեան հալածանքի քաղաքականութիւնն ու հայութեան հանդէպ իրենց ատելութիւնը արդարացնելու համար յօրինել էին վտանգաւոր սուտ, թէ հայ ժողովուրդը յեղափոխական է, ուզում է մինչեւ Ռուստով մեծ Հայաստան ստեղծել, եւ թուրքերը ճիշտ են անում, որ նրանց կոտորում են: 1910 թուին այս երեւոյթի դէմ հանդէս եկաւ Յ. Թումանեանը: "Հայ ժողովուրդը "յեղափոխական"՝ յօդուածում ("Հորիզոն" 1910, թիւ 219) մեծ բանաստեղծը գրել է. "Պետական դումայի անդամ Զամբսովսկին, սենատի առջեւ, Բաբուի ոստիկանապետ Դեմենսկուն ու միւս ոստիկանական պաշտօնեաներին պաշտպանելիս, յայտարարում է, թէ "հայերը յեղափոխականներ են", նրա համար էլ "պետութեանը հաւատարիմ թուրքերը նրանց կոտորել են . . .":

Պուրիշկեւիչն էլ միւս կողմից հեռագրով սպառնում է Փոխարքայի դիւանատան կառավարիչ Պետերսոնին, որ պաշտպանութիւն է ցոյց տալիս "յեղափո-

խական հայ ժողովրդին”:

Յեղափոխական հայ ժողովուրդ. . .

Այլևս դժուար է այդ մարդկանց հարցնելը, թե ամեն մի ժողովրդի մեջ կան ու կը լինեն յեղափոխական տարրեր ու կազմակերպություններ, բայց մի՞թե ամբողջ աշխարհում կայ կամ կարող է լինել մի յեղափոխական ժողովուրդ:

Այլևս անկարելի է հասկացնելը, թե եթե կայ մի ժողովուրդ, որ յեղափոխական չէ եւ լինելու էլ իսկի տրամադրութիւն ու հնար չունի, այդ հենց ինքը հայ ժողովուրդն է, որ կայ: Բերե՛ք այդ ժողովրդի իրականութիւնը, կեանքի պատմութիւնը, ապացուցե՛ք, ցոյց տուե՛ք: Միեւնոյն է նրանց համար:

- Հայ ժողովուրդը յեղափոխական է:

Անշուշտ այս տեսակ մարդկանց համար Աստուած ինքն է ուղարկել այն հայերին, որոնք թե՛ մեզանում եւ թե՛ արտասահմանում մի յանցաւոր ցուցամոլութեամբ հայ “սոցիալիստներ” կամ յեղափոխականների թիւը հարիւր հազարներով են ներկայացնում՝ այնտեղ օտարներին զարմացնելով, այստեղ՝ մեզ”:

Այս տեսակ “զարմանալի” յեղափոխական էր Ընկեր Փանջունին:

Իսկ ի՞նչ հանգամանքներում է Փանջունին դառնում ընկերվարական եւ յեղափոխական. արդեօք այլասիրութիւն-ալտրուի՞զմն էր դրդապատճառը, թե՞ սոցիալական անհաւասարութեան դէմ անձնուիրաբար պայքարելու ազնիւ ձգտու-մը կամ ունեզուրկների ու անիրաւուած-ների շահերի պաշտպանութիւնը: Փանջունին շա՛տ էր հեռու այդ գաղափար-ներից ու նպատակներից: Պարզապէս հօր մահից յետոյ աւագ եղբայրը երեք տարում կրկնապատկել էր իր բաժին ժառան-գութիւնը, իսկ ինքն իր բաժինը վատնել էր “անձնդ իւր կեանքով”: Եւ միայն այն պահին, երբ այլևս գրպանը “փարա” չէր մնացել, եւ ընկերներն ու ծանօթները

“անուշութեամբ” նրան հեռացնում էին իրենց միջավայրից, այդ պահին նա “յայտնագործեց ընկերվարութիւն-սոցիալիզմը՝ իբրեւ փրկարար միջոց, միայն այդ պահին տեսաւ “կապիտալիզմի դաժանութիւնը, ընկերային անարդարու-թիւնները” եւ զգաց “հարստութիւնը հաւասար բաժանելու հրամայական անհրաժեշտութիւնը”:

Ընկերվարական Փանջունին Տրապի-զոնի խաղաղիկ սրճարաններում առաւօտից իրիկուն որոտածայն բողոքում էր “կեղտոտ պուրժուաներու” դէմ, սպառնում ոչնչացնել ու հողմացրիւ անել ամեն ինչ: Այս փորձանքից ազատուելու համար եղբայրը նրան 200 ֆրանկ ամսականով ուղարկում է Մարսելի վաճառականական դպրոցը, բայց Փանջունին չի հաւանում այդ դպրոցի ծրագիրը: Նա մեկնում է Ժնեւ, դառնում “սոցիալ գիտութիւններու ազատ ուսանող”: Զորս տարուայ ընթացքում, սակայն, նա ընդամենը հինգ անգամ է յաճախում համալսարան: Այն էլ՝ ո՛չ դասախօսութիւններ լսելու ու գիտելիքներ իւրացնելու նպատակով: Բայց նա կանոնաւորապէս յաճախում է գարեջրատներ, որոնք իր “գլխաւոր կայաններն” էին: Այստեղ էին քննարկում ժամանակի մարդկութեանը յուզող բոլոր ընկերային հարցերը, այստեղից էր Փանջունին ուժակոծում “կեղտոտ պուրժուաներին”, կեղեքիչ կապիտալիստ-ներին եւ իրեն ամիսը 200 ֆրանկ ուղարկող եղբօրը: Բայց 1896 թ. ջարդերի հետեւանքով եղբայրը հարկադրուած էր թողնել ամեն ինչ եւ կնոջ ու երեխաների հետ միասին տեղափոխուել Նւրդպա: Փանջունին, զրկուած նպաստից ու ապրուստի հեռանկարից, իր վատթարագոյն վիճակից ելք որոնելիս ընդունում է “ուսանող, յեղափոխական եւ միանգամայն խմբագիր” մի ընկերոջ փրկարար առաջարկը:

"Եկուր քեզ յեղափոխական գործիչ շինեմք" - ըսաւ բարեկամը," խօսելու դիրքութիւն ունիս՝ այդ բաւ է:

Ծովը իյնողը օձին կը փաթթուի, կ'ըսէ առածը, մեր մէջ ալ կարելի է ըսել, թէ՛ անօթի մնացողը յեղափոխական կ'ըլլայ(23):

Ուրիշ պայմաններում ու հանգամանքներում հազիւ թէ Փանջունին յեղափոխական գործիչ դառնար. նա պարզապէս ուրիշ ելք չունէր, ուստի ընդունում է առաջարկը եւ ստանում գործունէութեան ասպարէզ, ուր դրսերում է իր անծայրածիր ապիկարութիւնը որեւէ դրական բան կատարելու մէջ եւ հանճարը՝ ամէն ինչ փանդելու եւ աւերելու մէջ:

Փանջունին նոյնպէս մականոյթ է, բայց մեզ ծանօթ յեղափոխական մականոյթների առաւել վտանգաւոր տեսակը: Նախորդներից (Կակաեանց, Վարդապետեան, Դաշոյն Արտունի, անուալեր հերոսներ) շատ բան է ժառանգել Փանջունին, նրանց գրեթէ բոլոր ցայտուն գծերի խտացումն է: Տարբերութիւնն այն է, որ նախորդները շահարկում էին իրական հերոսների փառքը, նրանց սխրանքներն իրենց վերագրելով էին դրամ հաւաքում, պատուընում ու նուէրներ ստանում իրենց իրական էութիւնը չնանաչող միամիտ հաւատացեալներից, իսկ Փանջունին ժողովրդի բախտի հետ խաղացող արկածախնդիր գործիչ է՝ լիազօրութեամբ կուսակցական կենտրոնի կողմից: Ինքը կարող է ամէն ինչ եւ ամէնքին զոհել, բայց ինքը որեւէ զոհողութեան (էլ ո՛ւր մնաց անձնագոհութեան) ընդունակ չէ: Քաղաքական եւ հասարակական իմաստով, մանաւանդ ազգային-ազատագրական պայքարի շրջանում, երբ գոյամարտ է մղում յանուն հայրենիքի ամբողջութեան պահպանման եւ ժողովրդի փրկութեան, առաւել վտանգաւոր ներքին թշնամի, քան Փանջունին է, հնարաւոր չէ պատկերացնել:

Իսկ եթէ Փանջունու պերնախօսութիւնն ու յեղափոխական կորովը, տենդագին ֆարոգները այնուամենայնիւ որոշ արդիւնք տալիս էին, ապա դա ոչ թէ նրա առաւելութիւնն էր կամ յաջողութիւնը, այլ ժամանակների ու հանգամանքների թելադրանքը, հայրենիքի հանդէպ պարտքի զգացումը, որը ժողովրդի ազնիւ ու անձնուէր զաւակներին, Փանջունիներից անկախ, պիտի առաջնորդէր կենաց ու մահու պայքարի:

Եռանդուն պերնախօսութեամբ Փանջունին "կենաց քանն" է ֆարոգում Պուլղարիայում, Յունաստանում, Եգիպտոսում ու Կովկասում: Նա "կը հրդեհէր սառած հոգիները, կը զօրացնէր թուլցած ջիղերը, կը խանդավառէր միամիտ էութիւնները": Հայրենանուէր երիտասարդները կազմում էին ֆիդայական խմբեր, մեկնում Արեւմտահայաստան՝ Թուրք ջարդարարների դէմ մականագրական կռուի: Իսկ Փանջունին միշտ մնում էր արտասահմանում: Ակնյայտ է նմանութիւնը Կակաեանցի հետ, ուղղակի նրա երկուորեակն է. նա էլ արտասահմանի գործիչ էր: Հայրենիքի կռուին անձամբ չմասնակցելը նա պատճառաբանում էր ռեմաքիզմով (այլապէս վաղուց կը լինէր Մասիսի գագաթում) եւ թուրքերի հանդէպ մոլեգին ատելութեամբ (եթէ նրանց հանդիպէր, բոլորին անխնայ պիտի կոտորէր): Ունէր արդարանալու մի հնարանք էլ. "Մենք ժամկէտներու կը նմանինք, - յաճախ ասում էր նա - զանգահարութեամբ ուրիշները կը հրաւիրենք ու եկեղեցի կը մտցնենք, իսկ մենք դուրսը կը մնանք": Անսօղ է հեղինակի հեգնանքը այս երեւոյթը մարմնաւորող հերոսների, ներկայ դէպքում՝ Փանջունու նկատմամբ. "Ազնիւ անձնագոհութիւն"(24):

Փանջունին այդպէս էլ պիտի շարունակէր իր "ազնիւ անձնագոհու-

թիւնը," պարսկական սահմանագլխին եւ միանգամայն գոհ պիտի լինէր իր վիճակից, եթէ նրան չխանգարէր թուրքիայում տեղի ունեցած նոր իրադարձութիւնները՝ համիդեան ռեժիմի տապալումը, սահմանադրութեան ընդունումը, թուրքերի եւ օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր ժողովրդների իրաւահասարակութեան եւ համերաշխութեան ժամանակաւոր ցոյցերը, Թուրքիա ազատ ելումուտը, բանտարկեալների ընդհանուր ներումը: Մի պահ, կարծես դէպքերը զարգանում էին Փանջունու կամփին ու ցանկութիւններին հակառակ. "Մեր գործը պրծա՛ւ, - մտորեց մեկամաղձոտ մտատանջութեամբ մը: Սակայն Փանջունին իր յստակատեսութեան մէջ կը սխալէր: Բուն գործը հիմա պիտի սկսէր"(25):

Ակնառու է դառնում Փանջունու բնաւորութիւնն ու գործելակերպը բնորոշող մի ոչ պակաս էական յատկանիշ. նա գործում է այնտեղ, ուր իր անձին որեւէ վտանգ չի սպառնում: Ֆիդայական խմբերի հետ նա արտասահմանից Երկիր չէր

գնում, որովհետեւ վտանգաւոր էր: Սահմանադրութիւնից առաջ Պոլիս չէր գնում՝ խստագոյն ռեժիմի պատճառով: Բայց ահա, թերթերից իմանալով նոր իրադարձութիւնների, Պոլսի փողոցներում ու հրապարակներում հնչող ճառերի, պոլսեցիների միամիտ խանդավառութեան մասին՝ ինքն էլ է որոշում իր նարտարութիւնը փորձել այնտեղ եւ "օղաֆարի պէս" յայտնուում է Պոլսում: Փարիզի կոնգրեսի հրաշքները փառաբանող ութ-տասը դասախօսութիւն է կարդում Պոլսոյ թաղերում, սակայն Ակնունու եւ Շահրիկեանի պերճախօսութեանը վարժուած Պոլսեցիները չեն ընդունում Փանջունուն: Ուստի նա, Պոլսում չգտնելով ունկնդիրներ եւ համակիրներ, յայտնագործում է գաւառը լուսաւորելու, զարթնեցնելու եւ յեղափոխելու վճռական անհրաժեշտութիւնը: Եւ մեկնում է Արաբկիր, այնտեղից էլ՝ Ծապլվար (սա երեւակայական գիւղ է), ուր եւ ծաւալում է իր յեղափոխական, տենդոտ գործունէութիւնը:

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ